Ֆրէտէրիկի եւրոպական բանակին չարժման տարին՝ երբ տակաւ առ տակաւ խաղաղութիւն կը հաստատուի Երուսաղէմի մէջ, Աբրահամ և Առաքել եպիսկոպոսները ազատութեամբ կը տիրանան այն իրաւունքին զոր ունէին վաղուց հետէ և կը շինեն նկարակերտ դուռը, որ մշտական յիշատակարան մ'է Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ հայկական իրաւունքներուն եւ Հայոց վանքի ճանապարհի ապահովութեան:

Բեթղեհէմի Ս. Ծննդեան ամբողջ եկեղեցիին Հայոց ընկերովի իրաւունքը հրովարտակներով հաստատուած է. սիւնազարդ գաւիթին կից հիւսիսային դասը կը պատկանի Հայոց որ հոն կը կատարեն սովորական ժամերգութիւնները: Հայոց սեպհական այս մասը ունի երկու խորան, սնտուկ և պահարաններ: Ս. Ծննդեան այրը Յունաց աւագ խորանին տակը կը գտնուի, ունի երկու պղնձէ դռներ՝ մին Յունաց հարաւային դասին մէջ և անոնց յատուկ, ուրկէ 13 աստիճանով վար կ'իջնուի. միւսն՝ Հայոց հիւսիսային կողմը 16 աստիճանով՝ զոր կը գործածեն Հայք և Յոյնք, իսկ Լատինք որ այժմ նոյն դրան ընկեր են. յայտնի չէ թէ ո՛ր թուականին այդ իրաւանց տիրացած են: Քրիստոսի ճիշդ ծննդեան տեղւոյն վրայ կը գտնուի պատարագամատոյց սեղան մը, որուն վրայ Հայք և Յոյնք կը պատարագեն, սեղանին մարմարեայ յատակը կիսաբոլորակ ձեւով է և մէջտեղը փոսիկ մը կայ արծաթեայ ճաճանչ մը ագուցուած եւ բոլորտիքը հետեւեալ լատիներէն արձանագրութեամբ. Աստ ծնաւ Յիսուս Քրիստոս ի Մարեմայ կուսէն: Այս սեղանէն երեք մեթր դէպի հարաւային արեւմտեան կողմը երեք աստիճանով վար կ'իջնուի Մսուրը, ուր Լատինք կը պատարագեն, ինչպէս նաև անոր արեւելեան կողմի Երից մոգուց կոչուած սեղանին վրայ, ուր ըստ աւանդութեան մոգերը կանգնած էին իրենց ընծաները Մանուկ Թագաւորին մատուցած ժամանակ: Այս վերջին սեղանին համար՝ կ'ըսուի թէ՝ Հայոց սեպհական էր, որուն կանթեղին մախարան տակաւին կը տեսնուի (Տե՛ս Հանեան, Պատմ. Երուսաղեմի. էջ 288): Այրին արեւմտեան դուռը Լատինաց կը պատկանի, ուրկէ իրենց եկեղեցին կ'երթան, ստորերկրեայ գերեզմաններէն անցնելով: Ս. Ծննդեան եկեղեցւոյն մէջ կատարուած ժամերգութեան, Ս. Պատարագի, հանդէսներու եւ այլ սովորութեանց, ինչպէս նաև կանթեղներու և պատկերներու մասին տեղեկանալու և